



Հաստատում եմ՝

ԵՊԼՀ ռեկտոր

Կ. Հարությունյան

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ

Ժ.02.07 «ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՂՈՒՆԵՐ (ԱՆԳԼԵՐԵՆ)»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԱՇԱՐ


1. Անգլերենի զարգացման 3 փուլերը և դրանց սահմանազատման պատմական և լեզվական չափանիշները:
2. Հին անգլերենի հնչյունական համակարգի հիմնական առանձնահատկությունները և փոփոխությունները:
3. Հին անգլերենի շեշտված և անշեշտ վանկերի զարգացումը միջին և ժամանակակից անգլերենում:
4. Հին անգլերենի երկբարբառների մենաբարբառացումը և նոր երկբարբառների կազմավորումը միջին անգլերենում:
5. Հիմնական հնչյունական փոփոխությունները միջին և ժամանակակից անգլերենում (քանակական, որակական, փայնավորների մեծ տեղաշարժ):
6. Սկանդինավյան փոխառություններ: Միջին անգլերենի բառապաշարը:
7. Ֆրանսերեն փոխառությունները միջին և ժամանակակից անգլերենում:
8. Ուժեղ բայերի համակարգը հին անգլերենում և զարգացումները ժամանակակից անգլերենում:
9. Թույլ բայերի համակարգը հին անգլերենում և զարգացումները ժամանակակից անգլերենում:

10. Հին անգլերենի գոյականի սեռի և հոլովների կարգերը և դրանց կրած փոփոխությունները միջին և ժամանակակից անգլերենում:
11. Հատույթային և վերհատույթային հնչյունաբանություն:
12. Ժամանակակից անգլերենի հնչերանգն ու նրա գործառույթները (քերականական, վերաբերմունքային):
13. Հնչույթի բնորոշումը (տարբերակիչ և ոչ տարբերակիչ հատկանիշները):
14. Հնչյունական հակադրությունների չեզոքացումը (գերհնչույթ):
15. Ռիթմը և նրա տարրերը: Արձակ և բանաստեղծական ռիթմի տարբերությունները:
16. Անգլերենի բառակապակցությունների դասակարգման տեսություններն ու վերլուծության մեթոդները:
17. Անգլերենի հոլովական համակարգի տեսությունները:
18. Խորքային հոլովների տեսությունը:
19. Բայական սեռի կարգը անգլերենում:
20. Բայի ժամանակի և կերպի կարգերը անգլերենում: Չեղչում և տարանջատում:
21. Նախադասություն: Ստորադասում և համադասում:
22. Պարզ նախադասության կառուցվածքը և ուսումնասիրության եղանակները՝ ա) ավանդական, բ) բաշխումային, գ) անմիջական բաղադրիչներով վերլուծության, դ) փոխակերպական:
23. Փոխակերպական քերականության հիմնադրույթները, փոխակերպական երկիմաստություն: Թեմա-ռեմա հարաբերակցությունը:
24. Տեքստի տեսությունները: Տեքստի քերականական կարգերը: Վերասույթային միասնություն:
25. Բառիմաստ: Բառիմաստի հիմնական բաղադրիչները ժամանակակից անգլերենում:
26. Համատեքստային իմաստ և գործաբանական իմաստ:
27. Բազիմաստության և համանունության խնդիրը ժամանակակից անգլերենում:

28. Բառի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից անգլերենում:
29. Ձևաբանական և բառակազմական վերլուծության հիմնական տարբերությունները:
30. Բառերի հարացույցային հարաբերությունները ժամանակակից անգլերենում:
31. Հոմանշային, հականշային և վերանվանական հարաբերությունները ժամանակակից անգլերենի բառապաշարում:
32. Բառակազմությունը ժամանակակից անգլերենում:
33. Բառակազմության հիմնական միջոցները: Կենսունականության խնդիրը:
34. Բառերի շարակարգային հարաբերությունները ժամանակակից անգլերենում:
Արժույթայնություն (վալենտականություն) և կապակցելիություն:
35. Արժույթայնություն (վալենտականություն) և կապակցելիություն:
36. Փոփոխական և կայուն բառակապակցությունների տարանջատման սկզբունքները ժամանակակից անգլերենում:
37. Դարձվածային միավորների դասակարգման սկզբունքները (տարբեր տեսություններ):
38. Բառապաշար: Բառապաշարի շերտերը և ոճական տարբերակումը (նորաբանություններ, գիտաբառեր, փոխառություններ և այլն):
39. Իմաստաբանություն և գործաբանական լեզվաբանություն:
40. Իմաստաբանական վերլուծության ժամանակակից մեթոդներ:
41. Ցուցայնություն և հարակցում:
42. Իմաստ և նշանակություն: Անվանում և ցուցում:
43. «Ոճ» հասկացության տարբեր ընկալումները: Լեզվական ոճ:
44. Ոճագիտության առարկան: Ոճագիտության և բանասիրական այլ գիտակարգերի հարաբերակցությունը:
45. Լեզվի գործառույթների տեսությունը, տարբեր մոտեցումներ:
46. Գործառական ոճերի տարբերակումը:
47. Գիտական ոճ: Բնորոշ գծերը:

48. Հրապարակախոսական արձակի գործառական յուրահատկությունները:
49. Գեղարվեստական ոճ: Գործառական-հաղորդակցական մոտեցում
գեղարվեստական տեքստի ընկալման և մեկնաբանման հարցին:
50. Լեզվական նորմ և շեղումներ նորմից:
51. Ոճական հնարների համակարգը:
52. Փոխաբերությունը և փոխանունությունը որպես լեզվապատկերման հիմնական միջոցներ:
53. Բառիմաստի տեսակները: Բառիմաստը և առնչանակությունը լեզվի (inherent connotation) և խոսքի (adherent connotation) մակարդակներում:
54. Շարահյուսական ոճական հնարներ (շրջուն շարադասություն (inversion), ժխտում, շաղկապների գործածություն և այլն):
55. Ասույթի հնչյունային ձևավորման ոճական հնարները:
56. Թարգմանությունը որպես միջմշակութային հաղորդակցության առաջնային եղանակ:
57. Թարգմանելիության և անթարգմանելիության խնդիրը ժամանակակից թարգմանաբանական տեսություններում:
58. Համարժեքության ապահովման խնդիրները թարգմանության մեջ:
59. Փոխակերպումները որպես համարժեք թարգմանության հասնելու միջոց:
60. Փոխանվանական և փոխաբերական տեղաշարժի սկզբունքների կիրառությունը որպես համարժեք թարգմանության ապահովման միջոց:

Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչ



Ք. Սողկյան